Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ՎԻԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՔԱԶՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԻԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՔԱԶԵԱՆ, ՈՐ Ի ՆԻՒ ԵՕՐՔ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բազմավաստակ սպասաւորիդ:

Սիրելի Սրբազան, Ամենախնամ Աստուծոյ կամօք եւ օրհնութեամբ երեք ու կէս տասնամեակ առաջ Տէրունակոխ երկրում, Սրբոց Յակոբեանց վանքում ուսումնառութիւնը ամբողջացնելուց յետոյ Դուք անձնուիրումի ու ծառայութեան ուխտ կնքեցիք Աստուծոյ Սուրբ Սեղանի առջեւ՝ ստանձնելով կուսակրօն հոգեւորականի նուիրական առաքելութիւնը:

Նախախնամութեան առաջնորդութեամբ Դուք հովուական սպասաւորութեան կոչուեցիք Շվեյցարիայում՝ Աւետարանի կենաց խօսքը ջամբելով հաւատաւոր Մեր զաւակներին: Ի գնահատութիւն Ձեր հովուական գործունէութեան, Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակուեցիք Շվեյցարիայի նորակազմ թեմի առաջնորդ եւ արժանացաք եպիսկոպոսութեան բարձր աստիճանի՝ առաւել զօրացնելու ազգային-եկեղեցական կեանքը բարեպաշտ հայորդեաց:

Բարեյիշատակ Հայրապետը Ձեզ կոչեց նաեւ իբրեւ Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում: Ուրախ ենք, որ երկարատեւ նախանձախնդիր գործունէութեան շնորհիւ ընտրուեցիք Ամերիկայի Եկեղեցիների Խորհրդի նախագահ, ինչպէս նաեւ անդամ ԵՀԽ Գործադիր Վարչութեան, եւ շարունակում էք գնահատելի աւանդ բերել միջեկեղեցական կառոյցներում մեր Եկեղեցու դիրքերի ամրապնդմանը, քոյր Եկեղեցիների հետ յարաբերութիւնների զօրացմանը:

Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ Մայր Հայրենիքում Ձեր իրագործած նախաձեռնութիւններին: Հայրենի մեր երկրի անկախութեան առաջին տարիներին նախանձախնդիր ոգով վարելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի հո-

վանու ներքոյ գործող ՀՕՖ-ի Հայաստանեան գրասենեակի պատասխանատուի պաշտօնը, Դուք արդիւնաւորապէս ծառայեցիք ի նպաստ կարիքաւոր հայորդեաց առջեւ ծառացած դժուարութիւնների յաղթահարման ու Հայրենիք-Սփիւռք կապերի զօրացման: Հայրենի մեր երկրին Ձեր ծառայութիւնները նոյն նուիրումով շարունակում էք նաեւ այսօր, ԱՄՆ հայոց Արեւելեան թեմում Ձեր պաշտօնավարութեանը զուգընթաց, Ձեր ջանքերը ներդնելով յանուն «Հաբիթաթ» կազմակերպութեան՝ «Գարեգին Բ» տնաշինական ծրագրի յաջող իրականացման: Ուրախ ենք հաստատելու, սիրելի Սրբազան, որ ամենուր Ձեր գործունէութեան մէջ՝ Երուսաղէմի հայոց Պատրիարքութիւնում, Շվեյցարիայի եւ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմերում, Մայր Հայրենիքում, Դուք դրսեւորել էք Ձեր անխախտ հաւատարմութիւնն ու նախանձախնդրութիւնը Տիրոջ սպասաւորի սուրբ կոչման նկատմամբ եւ Ձեր որդիական աննուազ սէրը՝ հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու Հայրենի մեր երկիրը:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր անմնացորդ ծառայութիւնը եւ տարիների վաստակը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ:

Ի խորոց սրտի մաղթում ենք Ձեզ քաջառողջ եւ արեւշատ կենաց օրեր, որպէսզի Տիրոջ Սուրբ Աջի հովանու ներքոյ շարունակէք Ձեր առաքելութիւնը՝ նորանոր եկեղեցաշէն ու ազգօգուտ յաջողութիւններ արձանագրելով Ձեր ծառայութեան մէջ:

Թող Ամենակալ Տէրն անսասան պահի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Նոյեմբերի
Յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 377